ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6</u>

18 ՀՈՒԼԻՍԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ինը (9)

անդամներ:

Բացակա էին՝ Ա. Մանուկյան, Ռ. Աբրահամյան, Ա. Առաքելյան, Ա. Աբրահամյան, Կ. Խաչատրյան, Հ. Բաբայան

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> Հ. Խաչատրյան, Ռ. Մանուկյան, Ա. Մկրտչյան

<u>Նիստը վարում էր</u> համայնքի ղեկավար Ռ. Առաքելյանը

<u>Նիստը արձանագրում էր</u> Սուրեն Ծատուրյան

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ՝ 6-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Ծատուրյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1.Հաստատել 18-ը հուլիսի 2024թ. թիվ 6-րդ արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2024թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

3.Եղեգիս համայնքի 2024 թվականի առաջին կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվության հաստատման մասին,
4.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը և հողամասի վրա գտնվող առևտրի սրահը կառուցապատող Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին,
5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղային հանքերևակման տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար երկու տարի ժամկետով պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին,
6.Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Եղեգիս համայնքի հայտը հաստատելու մասին,
7.Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամի թեկնածու առաջադրելու մասին,
8.Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամների թեկնածուներին հաստատելու մասին,
9.Եղեգիս համայնքում «Թումոն տուփի մեջ» ծրագիրն իրականացնելու նպատակով հողամասի գնումը անհետաձգելի համարելու և Եղեգիս համայնքի ավագանու 19/04/2024թ. թիվ 41Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին, մասին,
10.Դրամական օգնություն ցուցաբերելու մասին,
11.02-ը փետրվարի 2024 թվականի «Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,
12.Եղեգիս համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին,
13. Ոփյերձ ընդունելու մասին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79Ա/

Լսեցին
ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Օհանյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն՝ Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2024թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին (համաձայն սույն որոշման կից հավելվածի):

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը, համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ԿԱՌՈՒՅՑՊԱՏՈՂ ՍԱՀԱԿ ԽԱՉԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Հայաստանի

Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 20/11/2023թ. թիվ 260Ա որոշումը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1)Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի Սիրանեսի փողոց թիվ 27/1 հասցեում գնվող 0.01168 հա հողամասը (ծածկագիր՝ 10-029-0014-0014, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման) և հողամասի վրա ինքնակամ կառուցված 18,5քմ (արտաքին մակերեսը՝ 25,7ք/մ) առևտրի սրահը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին:

2)Հաստատել հողամասի և առևտրի սրահի համար հաշվարկված գումարները.

ա.25,7 *ք/մ ընդհանուր արտաքին մակերեսով առևտրի սրահի համար* ՝ ընդամենը 145950,3 (մեկ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր հիսուն ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը,

բ.*0.01168հա բնակավայրերի* նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողամասի *արժեքը՝ 53927,28* ՀՀ դրամ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի IV. գլխի 33.1. կետի բ) ենթակետը և 33.2. կետը:

Ընդամենը՝ 199877,58 (մեկ հարյուր իննսունինը հազար ութ հարյուր յոթանասունյոթ *ամբողջ հիսունութ հարյուրերորդական*) ՀՀ դրամ:

գ.Վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի IV. գլխի 35.1. կետը:

Կողմ-0 Դեմ-7 Ձեռնպահ-2

Ոչ բոլոր մարդիկներն

Ոչ բոլոր մարդիկներն

Ոչ բոլոր մարդիկներն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի 44-րդ կետի ը) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով մարզպետի 02/07/2024թ. N 01/06-1-1/4112-2024 գրությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը երկու տարի ժամկետով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0239, մակերեսը 3,4855հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0172, մակերեսը 68,4593հա,

3)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0240, մակերեսը 4,6816հա,

4)կադաստրային ծածկագիր 10-041-0551-0001, մակերեսը 63,6282հա,

5)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0002, մակերեսը 49,7312հա,

6)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0017, մակերեսը 33,1763հա,

7)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0004, մակերեսը 14,9966հա,

8)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0007, մակերեսը 45,0հա,

9)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0042, մակերեսը 96,32385հա,

10)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0041, մակերեսը 310,7666հա,

11)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0040, մակերեսը 130,4622հա,

12)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0238, մակերեսը 34,0134հա,

13)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0018, մակերեսը 35,54741հա:

Ընդհանուր մակերեսը 890,27216հա:

2.Վարձավճարը սահմանել տարեկան 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով:

Կողմ-6 Դեմ-2 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83Ա/

Լսեցին

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՄՀԸ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Եղեգիս համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին:

2. Համաձայնություն տալ համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 20% համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի Բաժին 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. [signature] /

Հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 17/11/2017թ. «Եղեգիս համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 24Ն որոշման կից հավելվածի 17-րդ կետի 1)-ին ենթակետը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամի թեկնածու առաջադրել ավագանու անդամ Արտուշ Աշոտի Հակոբյանի թեկնածությունը՝ իր համաձայնությամբ:

Զորս Մարգարիտյան

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է /կցվում է N 85Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. /

Հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 17/11/2017թ. «Եղեգիս համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 24Ն որոշման կից հավելվածի 16-րդ կետի 1)-ին ենթակետը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամներիի թեկնածուներին՝

1)Հակոբյան Արտուշ
2)Գաբրիելյան Բորիս
3)Գաբրիելյան Ատոմ
4)Օհանյան Բաբիկ
5)Եղոյան Վարդանուշ
6)Մելքոնյան Նազիկ
7)Մանվելյան Թովմաս
8)Մարտիրոսյան Զոյա

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ԹՈՒՄՈՆ ՏՈՒՓԻ ՄԵՋ>> ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՆՈՒՄԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19/04/2024Թ. ԹԻՎ 41Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 38.1.-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Անհետաձգելի համարել Եղեգիս համայնքում <<Թումոն տուփի մեջ>> ծրագրի իրականացման նպատակով հողամասի գնումը:
2.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ համապատասխան որոշմամբ թույլ տալու սույն որոշման 1-ին կետում նշված գնումը կատարելու մեկ անձից՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ», «գ», «դ» պարբերությունների պահանջները:
3.Չեղյալ ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու «Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատարածքից 200ք/մ մակերեսով հողամասը անհատույց օգտագործման, առանց մրցույթի «ՍԻՄՈՆՅԱՆ» կրթական հիմնադրամին հատկացնելու մասին» 19-ը ապրիլի 2024 թվականի թիվ 41Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 9 Դեմ- 0 Չեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87Ա/
Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ. Մուրադյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 02/02/2024թ. թվականի թիվ 10Լ որոշումը, Եղեգիս համայնքի ղեկավարի 19/02/2024թ. թիվ 43Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու դրամական օգնություն:

Կողմ- 7 Դեմ- 0 Չեռնպահ- 0 Հ. Ալեքսանյանը և Հ. Մուրադյանը չեն մասնակցել քվեարկությանը համաձայն ՀՕ դ/ մ օրենքի.

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88Ա/ 21.1 -դ հոդվածի տարբ. մասի.

Լսեցին
02-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Օհանյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Եղեգիս համայնքի 02 փետրվարի 2024 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել

ա.01.01.01-51- օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ոլորտի 4233-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ հոդվածից-650000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ

2)ավելացնել՝

ա.01.06.01-ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի -4239- ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածին՝ 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89Ն/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ. Գասպարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Եղեգիս համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 8 Դեմ- 0 Չեռնպահ- 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արզիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

Նիստն արձանագրեց՝